

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

թի 40

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Ուխտաւոր» եւ իր գիրքը. Տ. Ա.—«Ճերմակներու առուսուրը». ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԱՆ :—
Դիսուս եկածներէն. «Պատահներ». ԲՐԻՋԱՆԹԷՄ :—Խօսուածը (Բանաստեղծութիւն) ԺԱՆ
ՌԱՄՕ. քարգմ. ՓԱՅԼԱԿ :—Սիօն (Էջ մը «Ալեկուիա յերուսաղեմ»էն) ՌԻՏԱԻՈՐ :—Զըյ-
շումէն երբ (Նորավայ) ՖԱՐՀԱՏ ՆՕՐԻՍ :—Արցունքներս (Սիրերգ) Վ. :—Լիլիէն Մօրրիս.
ՀԷՆՐԻԲ ՍԷՆԲԻԷՎԻԶ. քարգմ. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖ :—Խմբագրական Նօթեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր.
եւ գաւառներուն համար յիսուն դր. : կանխիկ վճարելի : Արտասահման 12 Ֆրանք կամ
5 բուլլի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները ճկատողութեան չեն առնուիր :

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայ-
մաններով :

Զեմ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليهده غلطهده (ماسيس) غزقةسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԻՒՆԴՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՕՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդս զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտով կատարեալ առողջութեան հասցնէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ ասործակ կուտայ և թէ մարտորութիւնը կը շտապէ. Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսազօրութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր գործեան զօրութիւնն կուտայ: Ընդթէ Բաղադրութիւնը թէ կերակուր և թէ դեղ է. և տկարացած զրուծեան մը կարօտ եղած միտ և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգելու պարմանայի են: Անտարակից մեծ վտանքի մէջէ դրութիւններ երբ միտ և դաւալ կը կորսնցնէ և հետեւապէս շուտով այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕՐԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, որոնք վատնուած կը դադրեցնէ և առողջատես միտ կը կազմէ: Ընդ միշտ վարդագոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Բոլոր դեղատոմսերը և դեղամասանիքը իւր ծախին:

Հիշելու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

25

"AU TALON D'OR" ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՂՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար,—մանաւանդ հափու վրայ շինուելիք,—կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ թիւը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Դնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք սառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաձեւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ.

Նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մաթիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան Դիմել Կաճուրջին գլուխը լրագրավաճառ Միտք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵ ՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուինք մէկ քանին այն հաւ-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
զի՝ Օթէրա, Վօսվիլ, Նուվօթէ, Անպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թաղաքները, նաեւ
Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանզի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թաղաքները:

Պոն Մարչէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառարինիէսի,
Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալք-Մարսիլիա նաւարկութեան, Եովային Փօխադրութեանց,
Ֆրանսական Թրամուէյներու, ինայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե-
րութիւնը, իր Կազմական Կանոնադրին համաձայն, պարտաւոր է աւելն վեց ամիսը անգամ
մը իր ելմական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քնն-
նութեանը. նոյնպէս Մէնի քաղաքագետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պօլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ
իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է գիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ-
րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie
générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պօլսոյ կողմի գոր-
ծակալութիւնը:

Հասցէ. — Պօլիս, Մահուտ փաշա, Պէոյիւք Երլտըզ խան, թիւ 14, Լա Գոնֆիանս ա-
պահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող ան-
թիւի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաբըլար, թիւ 46, ուր գաւառներէն
առեւտարի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828 - 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՔՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիւնեով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՞ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւանք գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԵՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասամ Բաքրեք Օլլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԶԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանեան արաւքման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տե-

սակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունին. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Նրեք-շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոսաները: Յորեկները ակոսայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղբառներուն ձեռք

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արձաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չարաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'աւանդին. իսկ ապառիկ զբոսորդներէն՝ 100ին 15 զեղչով:

ՈՒՒՏԱԻՈՐ ԵՒ ԻՐ ԳԻՐՔԸ

Ո՛ւ՛յ՛ այն Ուխտաւորը որ Մուշէն կը գրէ և գաւառային գրականութիւնը կը մշակէ՝ իր ամէն երանգներուն մէջ, մերթ ալ Գեղամ ստորագրելով։ Ասիկայ, Ալեյուիա յերուսալէմին հեղինակը, մեր մօտէն ճանչցած գրագէտն ու բանասէրն է, որ իր ուխտաւորի տպաւորութիւնները, — աւելի՛ ուսումնասիրութիւններ՝ քան ճամբորդի նօթեր, — կ'ամփոփէ հատորի մը մէջ ուր վեց խնամոտ պատկերներ կը ներկայացնեն կրօնային—պատմական վայրեր և ինը լեցունակեկ գլուխներ կը նկարագրեն, հինին ու նորին խառնուրդով, Ս. Բաղասէր։

Առաջին ակնարկով մը իսկ անոր քանի մը էջերուն վրայ՝ ընթերցողը հեղինակին համեստութեանը պիտի վերագրէ սա յայտարարութիւնը, թէ «կրօնախառն երուսաղէմի ու պարագայից վրայ լաւագոյն գիրք մը՝ տիրական պարտքս ու փառաքան էր. արգելք եղան անոր՝ անյաջողութիւններ որ փետրաթափ ըրին կոյս ներշնչումներս...»։ Անշուշտ կարելի էր աւելի՛ ընդարձակ երկ մը յօրինել նիւթի մը վրայ որ անսահման է, բայց նոյն իսկ այս միջակ ծաւալով սիրուն հատորին մէջ արտայայտուող ներշնչումները կոյս են ու ինքնատիպ բոլորովին։ Le style c'est l'homme, ըսուած է և այս խօսքին ճշմարտութիւնը անգամ մըն ալ կը յայտնուի սոյն աշխատասիրութեան մէջ սւր նկարագրութիւն, զննութիւն, խորհրդածութիւն, ամէնն ալ նոյն խնկարոյր ոճը ունին։ Կրօնային—բանաստեղծական ոճ մը՝ թախծալից, տըպաւորիչ, որ կարդացողին երեւակայութիւնը կը սաւառնեցնէ դէպի նկարագրուած հեռաւոր միջնորդները, լերան լուսաւոր կատարներէն մինչև մթաստուեր հովիտը, հոյակապ

տաճարներէն դէպի կիսափուլ մատուռ մը։ Ու այս բոլոր երեւէջները, երթեւեկները, հանդարտ գնացքով, առանց զբօսաշրջիկի աճապարանքի, հնասէրի ու քննասէրի նայուածքով դիտուած, և դրագէտի գրիչով արձանագրուած։

Վրպական հրատարակութեանց դէմ մըղուած պայքարին մէջտեղ,—զոր, ա՛լ սուրբական դարձած հակասութեամբ մը, ամէնէն աւելի՛ սաստկութեամբ մղող թերթերը ամէնէն լայն տեղը կուտան վէպերու,—և ֆանթէզիին ու քրօնիկին նկատմամբ արտայայտուող բժանդրութեան միջոցին,—որ արգելք մը չէ, սակայն, անոնց համով հոտով կարդացուելուն,—ահա՛ գիրք մը՝ սուրբ, մաքուր, որուն իւրաքանչիւր էջը օծում մը ունի կարծես, և հոգին ու միտքը կը գրաւէ։ Այդ թարմ էջերէն մէկը կը ներկայենք այսօր Մասիսի ընթերցողներուն, հատուած մը միայն՝ Սիոնի նուիրուած գլուխէն, ամբողջական ընթերցման հաճոյքը չի խանդարելու համար, բայց միեւնոյն ատեն զաղափար մը տալու համար Ուխտաւորի այս երկասիրութեանը վրայ,—որ իր առաջին գործը չէ ու վերջինն ալ չըլլա՛յ, կը մաղթենք։ Վասնզի, իսկիւտարէն թուագրուած իր հակիրճ նախաբանը, գրքին բառով՝ «Մուտք»ը, ընդունշարել կուտայ մեզի այդ բարձունքին վրայ մենացած գրագէտը որ Հին Դէմքեր պատկերացնելու և Հին Օրերու անցքեր կենդանացնելու այնչա՛փ ճաշակ ունի, լրագրութեան ու գիրքի միջոցաւ, և այնչա՛փ ալ մասնագիտութիւն։ Աւելին գրելը անխորհրդապահութիւն պիտի ըլլար հեղինակի մը նկատմամբ որ այս անգամ կը սիրէ հագնել ուխտաւորի տարազը զոր գիտէ վայելցնել։

“ՃԵՐՄԱԿՆԵՐՈՒ ԱՌՈՒՏՈՒՐ,”

Այս միայլ վերնագրին կը ստիպուիմ դիմել՝ քանի մը խօսք ըսելու համար իբրեւ պատասխան Մէրսէտէսի յօդուածին որ երեւցաւ Մասիսի 37րդ. թիւին մէջ:

«Սխալ» ըսի, որովհետեւ այդ յորջորջումը որով կը նշանակուի Եւրոպայի մէջ աղջիկներու բարձրումը, սուտ ու պարկեշտ խոստումներով, իրենց ընտանեաց գրկէն կամ սպասուէիի ու գործաւորութիւի համեստ պաշտօններէն՝ շահակից օտարներու ձեռքով որոնք կը զրկեն դանոնք աւելցնելու թիւը «գոյ տուներու» մէջ «հաճոյքի միս»ին՝ նմանութիւն չունի ակնարկուած Ամերիկայոց Պոլսէն հարմնցու. վնասուելու պարագային հետ: Սխալ անով մանաւանդ որ Մէրսէտէս իր յօդուածով այդ հեռու երկիրները դացող աղջիկներուն պաշտպանութիւն մը չէ որ կը փորձէ՝ այլ ճիշդ հակառակը՝ կը զգուշացնէ էրիկ մարդերը «իրենց տունին մէջ լիժեր մտցնելէ» խորհուրդ կուտայ անոնց լաւագոյն համարիլ յաւէտ ամուրի մնալ քան այդ կարգի դժբաղդաբեր ամուսնութիւններ կնքել: Արդեօք, Մէրսէտէսի մտքին մէջ «ճերմակներ»ը մեր խեղճ գաւառացի աղջիկներն են որոնք եթէ իմանային՝ անշուշտ ինքզինքնին փայփայուած սլիտի զգային այդ որակումէն՝ եթէ միւսեւոյն ատեն վիրաւորուէին ալ նոյն անունով կոչուած սա՛ մեր Մանչէսթըրցիներուն խաւապին ու միաժիտ Եւրոպացի աղջկան պէս առուտուրի իբրեւ նիւթ ծառայելու դադարիարէն . . . :

Բառը, միայլ կամ ճիշդ, քիչ կարեւորութիւն ունի սակայն, ու յօդուածին ոգին է որուն կողմէն ընդգիմաբանել, որ անշուշտ շատ նոր ու հետաքրքրական երեւոյթ մը կը մատնանշէ ու կ'արժէ անշուշտ ատոր համար շնորհակալ ըլլալ յօդուածագրին:

Բայց նախ, ի՞նչ է խնդիրը: Պանդուխտ ամուրի Հայեր, Ամերիկա գործով հաստատուած, կը փափաքին ընտանիք կազմել ու ասոր համար չեն ուղեր ու չեն կրնար զիրենք հիւրընկալող երկրէն աղջիկ մը կին առնել

կը նախընտրեն իրենց չտեսած, չճանչցած, բայց վերջապէս իրենց ցեղէն եղող ու իրենց լեզուն խօսող օրիորդ մը, բարեկամներու դատումին վրայ, ճամբորդել տալ և ամուսնանալ հետը:

Գէշ կ'ընեն. — չեմ կարծեր, ու ինչո՞վ կրնայ այդ փափաքը դատապարտուիլ՝ եթէ անոր գործադրութիւնը նոյն իսկ տեղի կուտայ, ինչպէս կ'ըսուի, «մէկ. երկու և շատ աւելի անգամներ» Պոլսոյ մէջ ազարտուած համբաւով աղջիկներ իբրեւ առաքինութեան տիպարներ կնախնդիր մարդուն յարկին տակ մտցնելու: Ուրեմն մինակ անպարկեշտները կան Պոլիս որոնք տրամադիր ըլլան օտար երկիր հարս երթալու. հապա աղքատները, անոնք որոնք հօրենական դրամին ու անունին շնորհիւ տեղւոյն վրայ ամուսնացողներէն թերեւս շատ աւելի հոգեկան ու նիւթական ձիւքեր ունին ու չեն կրնար, ասով հանդերձ, պզտիկ դրամօժիտէ մը ու բաղդէ զրկուած ըլլալուն համար՝ կարգուիլ իրենց ծննդավայրին մէջ: Ասոնք չեն կրնար օրինակելի ամուսիններ դառնալ. չպիտի գնահատեն, բաժանումին առաջին կսկիծը անցնելէն ետք, իրենց ընձեռուած յարաբերական զիւրութիւնը, նոր ու մեծ քաղաքի մը մէջ նորէն յարաբերապէս հանգիստ ապրելուն առաւելութիւնները ու վերջապէս դոհացումը կին ըլլալու իրենց բնախօսական պահանջին որ կը սպառնար երբեք իր դոհացումը չգտնել և որ, վերջապէս, կարծեմ արժէք մը ունի աղջնկան մը կեանքին մէջ: Ես կը հաւատամ թէ մեծա:ամուսնութիւնը մինչև իսկ շահամուլ միջնորդներու ձեռքով որացուած «ճերմակ»ներուն որոնք կ'երթան Ամերիկա, համեստներու այս դասակարգին կը պատկանի և աւելի հաւանականութիւն կը գտնեմ այս եղանակով ընտրուած ապագայ գոյգերու երջանկութեանը մէջ, քան անոնց՝ որոնք ամիսներով շարունակուած սալօնի ֆլիրթներու իբրեւ վերջակէտ՝ սպակով իրարու կը միանան:

Աւելի առաջ երթալով՝ կը հերքեմ նոյն իսկ Մէրսէտէսի այն հատու կարծիքին ճշգրտութիւնը որով «բացարձակապէս անկարելի է ապականութեան ճամբուն մէջ ինկած աղ-

ըրկան մը երբեք չտկուիլ, ամուսնական կապով մը այս կամ այն անձին միանալէ վերջ»։ Պէտք է կեանքի շատ միակտուր ու շատ sim-
pliste ըմբռնում մը ունենալ, առաքինութեան ու մոլութեան մէջտեղ այս տեսակ խրատատ մը ենթադրելու համար։ Ասիկա կը յիշեցնէ ինծի իմ մանկութեանս՝ որ շատ հաւատաւոր էր՝ այն շատ անբարոյական մէկ հաւատքը որուն համեմատ «անգամ մը մեղանչողը՝ վըստահ ըլլալէ ետք թէ դժոգքը չանցաւ» պիտի շարունակէր մեղանչել», հաւատք զոր Եկեղեցոյ մեծագոյն հայրերը անգամ փութացած են քանդել, զգլումի ու ապաշխարութեան օրէնքները հաստատելով, որովհետեւ ինչ պիտի մնար Եկեղեցիին ընել եթէ, մահացու մեղք մը անգամ—զոր չգործող չիկայ—անքաւելի ըլլար։ Մերսէտէսի ակնարկած աղջիկները եթէ անպարկեշտներ ալ ըլլային՝ ինչ որ չեն՝ պիտի վարանէի այդ axiomeը անոնց մասին գործածել։ Լսած էք ներկայիս մէջ գոյութիւնը Բարիզ, մեծ սրտով կնոջ մը, Տիկին Ալբիլ տը Սէնթ Դրուաի որուն հիմնած տունը մայրաքաղաքին արուարձաններէն մէկուն մէջ՝ ճիշդ վերը յիշուած ընկերական վերջին աստիճանին վրայ գտնուողի, Բարիզի մայթներէն ժողովուած աղջիկներու դասակարգին իբրեւ ապաստանարան կը ծառայէ։ Նախագահ տիկնոջ տեղեկագիրը կը ցուցնէ թէ տասնեակներով են անոնք՝ խեղճ զոհի միսեր մեծ քաղաքին անդու, անյագ պահանջքին՝ որոնք, երիտասարդ կամ արդէն տարիքին սուած, պարկեշտ մթնոլորտի մը մէջ քանի մը շաբաթուան կայքէն յետոյ կը հրաժարին վերջնապէս կուրուստի ճամբէն ու կը պատահի սրերը, ճշմարտապէս առաքինի մարդ մը անցեալին վրայ կամաւ քօղ մը քաշելով, անոնցմէ մէկուն հետ ամուսնանայ՝ չզղջար իր ընտրութեանը վրայ, այնչափ խորունկ է երախտագիտութիւնը որ կը յառնու խեղճ. ցաւաքին աղջկան ինքնամոռաց սրտին մէջ։

Վերադառնալով մեր խնդրին, եթէ յոռի ընտրութիւններ տեղի կ'ունենան որոնց հետեւանքով անդին, Ամերիկայի մէջ, անյարմար զոյգեր պիտի կազմուին, յանցանքը մե-

ծագոյն մասամբ բարեկամներուն է անշուշտ որոնք իրենց յանձնուած փափուկ պաշտօնը պէտք եղած խղճմտութեամբ չեն գործադրեր։ Մացածը, բնաւորութեան, ճաշկներու ելլնի անհամաձայնութենէ ծագած՝ գրեթէ նոյնչափ անխուսափելի է կանխաճանաչութեամբ կնքուած ամուսնութիւններու մէջ ուղայն հակակշռելու համար յաճախ, ինչպէս ըսի, տարր մը կայ՝ կնոջ երախտագիտութիւնը իր կեանքի վիճակին երջանիկ փոփոխութեանը դիմաց։

Անձնապէս, քանի մը տարի առաջ Մարսէյի մէջ վկայ եղայ նմանօրինակ դէպքի մը։ Աւատրալիոյ կղզիներէն մէկուն կամ Հարաւային Ամերիկայի երկրի մը մէջ—լաւ չեմ յիշեր—վաղուց հաստատուած գաւառացի տարիքոտ Հայ մը գործի պատճառաւ Եւրոպայէր եկեր և այդ առթիւ երկու աղքատ պարկեշտ աղջիկ կը փնտէր իր երկու ամուրի երիտասարդ եղբայրներուն իբրեւ նուէր ու հարսնացու մէկտեղ տանելու համար։ Ինքը նախ մինակ գացեր էր այն քաղաքը, յետոյ գործերը հետզհետէ ծաղկելով, եղբայրներն ալ իր քովը կանչեր էր։ «Գոհութիւն Աստուծոյ, կ'ըսէր, հիմա կ'ին մը կրնան ապրեցնել»։ Բայց ո՛չ ինք կուզէր, ոչ եղբայրները կուզէին տեղացի օտարուհիներուն հետ ամուսնանալ. «ասոր փորձը ըրինք մէյ մը, կ'օգտէ» կ'աւելցնէր բարի մարդուկը ու կը պատմէր թէ ինքը երիտասարդութեանը ատեն իր նոր բնակավայրէն աղջիկան մը հետ կարգուեր էր որուն հետ կեանքը—այնչափ իրեն՝ որչափ աղջկան համար—անտանելի դարձեր էր և երկու տարի վերջը, կ'ինը՝ որ tout de même կ'երեւայ թէ իրմէ աւելի անտանելի դուած էր կեանքը, մեռեր էր։ Մարսէյի մէջ քանի մը աղքատիկ ամուրի հայ աղջիկներ կային ու դուրսեցին կը բանակցէր մեր գաղթականութեան անդամներէն մէկուն տանը խաթունիկ, քառուենոց, իրեն պէս այրի սպասուհիին միջոցաւ։ Օր մըն ալ իմացուեցաւ որ ճամբորդ Հայը սպասուհիին հետ կ'ամուսնանայ։ Պսակը ուրախօրէն տեղի ունեցաւ մեր մատուռին մէջ որ այդ առթիւ, եթէ չեմ սխալիր, քանի մը

նստարան կամ ջահ մը նուէրով մը բարե-
բարուեցաւ նոր-փեսայէն: Նորապսակ ամուլը
մեկնեցաւ, յուսախաբ ձգելով քանի մը կու-
սական երեւակայութիւններ եւ յուսահատ՝
խոհարարուհւոյն աղան ու հանրմը որոնք ա-
ղէկ կը զղջային հիմա դուրսեցի Հայը իրենց
սունէն ներս մտցուցած ըլլալուն: Անշուշտ
այս վերջինը, ինքզինքը մատակարարելէ
կտք, աւելի թեթեւ սրտով հող տարաւ, ուրիշ
տեղէ մըն ալ գտաւ պէտք եղած զոյգ մը
տատարկը զորս իր եղբայրներուն կը պատ-
րաստէր՝ ու այսօր Աւստրալիոյ կամ Հարաւ.
Ամերիկայի հեռաւոր մէկ քաղաքին մէջ փո-
խանակ երեք ամուրի Հայերու որոնց հետքն
ու սերունդը դատապարտուած էր մեզի հա-
մար կորսուելու՝ երեք հայ բնտանիք կան,
երեք ճղիկ կտրուած բնիկ ծառէն ու տըն-
կուած նոր հողի մը մէջ... Գէշ է:

ՎԱՀԱՆ ԹԷՔԵՆԱՆ

ՍԻՈՆԸ

Սիոնը: Երուսաղէմի խոհարար բարձրու-
թեանց ամէնէն խրոխտն ու յաղընջականն է
Սիոնն՝ ինք ստուգաբանեալ բարձրութիւնը⁽¹⁾
Ս. քաղաքին կապիտուլը, որուն աջակողմն
ուրուացած կեցած է՝ իբրեւ միւս Տարպէյ մը
Քեհնի (Հինոմի) տխուր ձորը ժայռուտ, ան-
ջրպետելով Սիոն լեռը Չարխորհուրդի լեռ-
նէն⁽²⁾: Յերուսաղէմիներուն այդ հին միջնա-
բերդը՝ Սիոն՝ այժմիկ աժգոյն ամբիթատը
մըն է վանքերու եւ վանիկներու, մշակեալ
ու անմշակ հողերու, դժպիսի խնդրունդներու,
պարըսպահմերու եւ հնախօսական աւերակ-
ներու, որոնց վրայ կը նային՝ հակադիր ու
կրօնապահ պերճութեամբ մը՝ Դաւիթի լայ-
նալէմ բերդն ու Ս. Յակոբի մեծատարած
վանքն Հայոց:

(1). Սիոն՝ բարձրութիւն ըսել է:

(2). Չարխորհուրդի լեռն՝ այսպէս կոչ-
ուած է ըստ նոր աւանդութեան մը (14րդ
դարի)՝ թէ կայափայ, որ այս լեռան վրայ
ամառանոց մը ունէր, հոս խորհուրդը ըրաւ
Հէթից հետ Յիսուսը բռնելու համար:

Հրեաներուն Տախտոնն՝ Յովսեպոս՝ կը հաս-
տատէ որ «Սիոն եւ Ադրա կեցած էին իրարու
դէմ՝ բաժնուած ձորով մը, որուն կը յան-
գէին տուններուն շարքը»: Սիոն, գէթ մինչեւ
Քրիստոսի թուականը, էր հին քաղաքին ա-
մէնէն բարեկարգ ու նշանաւոր մասը. Սիոն՝
Երուսաղէմի նախապատիւ վայրն էր ի հնումն
գրաւեալ հոյակապ շէնքերով: Անոր վրայ ճար-
պիկ Յերուսաղէմիներուն միջնաբերդը, որ ընդ
երկար ձայնատուր եղաւ Իսրայէլի եւ որ ի վեր-
ջոյ առնուեցաւ Դաւիթ մարգարէէն (Թիւք.
ժ. 29. Յովսեպոս ժ. 63. Դատաւորք Ա.
21): Ինք Բեթղէմէմի մեծ մարմնաքանարն
հոն շինեց իր բնակարանը: Հոն Սիոնի վրայ
դարձեալ՝ թաղուեցան Դաւիթ մարգարէն եւ
իր յաջորդներէն 14 անձինք:

Սիոնի այս հնաբանական բարձունքին վը-
րայ կառուցուած մայրաքաղաքն՝ հետզհետէ
առած է շատ մը անուններ: Յերուսաղէմի-
ներուն ատեն՝ ըսուեցաւ Յերուս, ապա Երու-
սաղէմ՝ կամ Յերուսաղէմ. Յովսեպոս կան-
ուանէ զայն «Վերին քաղաք» յաւելլով նաեւ
թէ իր ժամանակը ճանչցուած էր ան իբրեւ
«Վերին վաճառանոց»:

Այժմ իսկ՝ Սիոն միշտ բարձր ըմբռնուած
է այս սուրբ նահանգին լեռներուն մէջ, եւ
իբրեւ այնպիսի՝ կըրնայ բարձրացունել զիս
ալ Ս. Յակոբեանց բարձրադիր վանքին այս
ցածուն եւ նուիրական խուցերուն մէջէն,
ուր կը բնակիմ քանի մը ամիսէ հետէ՝ թա-
ռած իբրեւ մեղու յոստայնի եւ ինկա՛ծ ալ
կամա՛ւ միտքի ու սրտի բաւական բարձրու-
թենէ մը. այո՛, կըրնայ բարձրացունել զիս
ալ պահ մը գէթ կրօնքի ներող թեւերուն
թոյլատրածին չափ. իր ձայնաւոր անունը
այդ վսեմ՝ յաւիտեական թեւերուն վրայ՝
ո՞չ ապաքէն դարձած է տիեզերական ու
բացարձակ իմն քան զԼիբանան եւ քան
զՍոն-Պլան՝ Սաղմոսի եւ Շարականներու խն-
կածրար բանաստեղծութեամբը:

Ինք՝ հին ատենէն ամէնէն բարձր ու հիմա
ամէնէն վսեմ մասն է այս քաղաքին՝ իր ա-
մուր դղեակներովը, պարիսպներովը, դե-
րեղմաններովը ու հին Հայոց վանքերովը,
նաեւ մեկուսացեալ մատենական վեհութեամբ:

բը: Սիոնի նահապետ ուսերուն վրայ նոյն պերճ Դաւիթ մարգարէին և իմաստուն Սողոմոնին զրուցական դամբաններէն զատ՝ հաղիւ քանի մը սեմագրոյմ հնութիւններ, մողայիգներ, անփառ պարտէզներ՝ ցանուցիր տուներու եւ մարդաբնակութեանց հետ՝ կը դեգերին ստուերաբար՝ Դաւիթ մարգարէի բերդին օձիքն ի վար, որուն խորափիտքը՝ կը հսկէ միշտ հոգեւոր երկիւղ մը և կատարը՝ փառք մը աստուածային:

Այդ հողագոյն բերդին լայնանիստ ու քառակուսի պարզութիւնն, ամրութիւնն և հոսստանիմն անսեթեւեթ վեհութիւնը՝ շատ կը նմանի անոր նախահիմնողին Սաղմոսներուն անտեղալի պարզ վսեմութեան. նոյն վեհ և սուր հոգին՝ հոս այս դղեակին խոր և անկիւնաւոր աչքերուն վրայ խորացած, հոն մարգարէին երկնայեցիկ ականողեաց ճառադայթումներով բարձրացած:

Գարակոյտներով, կումբ կումբ գմբէթիկներով, մոխրագոյն աւերակներով, դերեզմաններով և աղքատին վանիկներով զրաւեալ այս լեռը՝ սուրբ քաղաքին առաջակողմ աչքն է հսկայ, որով ինք հինն Յերուս և նորն Երուսաղէմ կ'ողջունէ՝ Մովսէի լայնակող լեռներէն արձակուած այն մեծ աչքին — արեւին — նախկին ակնարկները: Մովսէի սահմանակալ այդ սուտարաչար շղթայէն մինչեւ Սիոն՝ տասը ժամու ճանապարհ է. այլ անջրպետն այդ երկու բարձրութեանց մէջ՝ հազիւ երկեակ մը ժամու կը թուի, այնքան վճիռ ու թափանցիկ է մէջտեղի սուրբ օդը, ամայի և հուպ ընդ հուպ լուրներով այնքան խտացած մօտեցած է այդ հեռաւորութիւնն և այնքան կը հոգիանայ կը թեթեւնայ ու կը թռչի հոս ուխտաւոր մարդուն աստուածամերձ տեսութիւնը: Նստած տոնն աւերակոյտէն, որ թերեւս երկրորդական մարգարէի մը ճգնարանը կամ սուրբի մը անձան է, Սիոնի արեւելակողմ զառի վայրին ճիշդ մէջ տեղը՝ չորս ժամու ճանապարհ մը առած օրակըչիւ արեգակին ներքեւ կը ձգի ձորն/Յովսափաթի խոր՝ ծովային անբեղուն խորութեամբ մը խոր՝ ապշած-պաղած իր եղերքներով, մէկ կողմէն քանի մը զուսպ գիւ-

ղերով և աջակողմէն հեղեղատի մը հատու և հերձախնեայ վիմուտներով, որ կը քարացունեն հոն 3000 տարիի մը կիսամաշ դիւցազներգութիւնը՝ լուռ և մոռնալ. իսկ առաջակողմը կը պատի ճաղ ճաղ բլուրներով՝ ցածուկ առհասարակ մինչև ի ծովն Աղաից. կոնակէն Զիթենեաց լեռը կուտայ այս ամէնուն փայլ ու փառք մը խաղաղագուարձ, մինչ աւելի խորունկ կոնակէ մը՝ կը նային իրենց ալլալակերպ ու ալլաճայեաց կողմերովը՝ Մեծն Էօմէրի՝ գեղեցիկ մզկիթը⁽¹⁾, Հրէից լայնագմբէթ սինաոնները, ուսական ոսկեգմբէթ Եկեղեցին, Երուսաղէմի Հրէաթաղն ու Հայոց վանքին ամուր գմբէթներն և զգոյշ որմերը. իսկ աւելի հեռաւոր աջակողմէ մը՝ կը խայտայ Բեթղէհէմի զուարթ ու կայտառ ճանապարհը, որ ունի կեանքի մը հրապոյրները պարզ՝ իր նուիրական անցեալով և ուխտաչատ ու զուարճատեսիլ ներկայով: Եւ ասոնց ամէնուն վրայ տաղտկօրէն թառած է տակաւին ձմեռնային լերկ ամառյութիւն մը, զոր հազիւ ամիսէ մը պիտի լրջացունեն դարունին ցնծազին մասները նախշուն:

Սոնարհ, տեղոյն, ելեւէջաւոր սեմական այս բանաստեղծութեանց մէջ՝ ինք անխոնարհելին Սիոն՝ միշտ վեհ և վսեմ կը թուի՝ նոյն իր անբաժան և պատառատուն կալուածներովն իսկ, մանաւանդ անոնց որ աստուածաճաշնչական սիրով մը բերուած են միանգամայն իր անցելոյն, իր պահպանողական սուր պատմութեան. միայն Սաղմոսը կը բաւէր պահելու համար զինքն՝ իր այդ վեհութեան ու վսեմութեան մէջ: Քրիստոնեայ վանականներ չըջապատած են Սիոնի այս անբաժ ու խորհրդաւոր կալուածներէն կարեւոր պատառներ՝ նոր անջրպետներով. ասոնց մին՝ Օգոստինեանց ստացուածք՝ կը պարունակէ քանի մը մէգր խորութեանց մէջ թաղուած Դաւիթ մարգարէի ժամանակէն աշտարակներու և պարիսպներու հնածուններ, զոր պեղուլով քննած ճշգրտած և ապա նորէն հողածածկած են: Միւս մը՝ ստացուածքն է հայ Վարդապետի մը որ գոց գիտէ բովանդակ

(1) Հին Սողոմոնեան տաճարին տեղը:

Երուսաղէմի ու չրջակայից տեղագրութիւնն
և մանրամասն արժէքներն հողերուն և շէն-
քերուն, ու կը թուի վայրն հռոմէական բա-
ղանիքի մը կամ ապարանքի մը՝ իր անձառու
ներքնուդիրներով և գեանասենեակներովը,
զորս անձամբ քննասիրեցինք երկու ամերի-
կացի երկրախոյզներու հետ՝ յոտից ցզլուխ
փոշեմուտ և խաւարամուտ։ Ասոնցմէ աս-
պարէ՛ղ մը վերն է՝ Սիրոնի ճիշդ առաջին
կատարին վրայ՝ Դաւիթ մարդարէի և Սողո-
մոնի գերեզմանները պարփակող լայնադիր
կառոյցն առասպելական, որ կ'ըսուի Սիրոն-
Վերնատուն և ուր կը բնակի պահակորէն ա-
ռանձնաշնորհեալ ընտանիք մը արաբ՝ Սիոնցի
անունով։

Հինդարեան և միջինդարեան շուրջ շէն-
քերու մէջ՝ այս Վերնատունն ունի միջինդար-
եան խրթին դղեակի մը երեւոյթն և խսկու-
թիւնը կարկառուն, վիթաւկան, կրօնական ու

կարի պատմական, խորհրդական սե՛մ բաւիղ
մը աստուածընկալ՝ Մելքիսեդեկէն, Ադոնի-
սեդեկէն ի Դաւիթ, ի Սողոմոն և անտի ի
Յիսուս, ի Հոգին Սուրբ և ի դարն քսանե-
րորդ ամենայն մը։ Սիրոն-Վերնատունն այդ
հին կարի հին օրերէն ցայսօր եղած է՝ խրոխտ
անհատոյց և ամէնաստացիկ բաժին մը ամէ-
նուն, Հայուն, Հրեային, Յոյնին, Լատինին
և այլն, որ իւրաքանչիւր իր տեսակէտէն կու-
գայ նկատել ու խորադննել զայն իր այժմու
թանգարանացեալ ձեւին տակ։ Այդ Ս. Թան-
գարանին պատմութիւնն է՝ որ կուզենք հա-
մառօտել հոս ըստ առձեռն տուիքներու։

ՌԻԽՏԱԽՈՐ

Ծ. Խ. — Արտատպուած Ալէլուիա յերու-
սաղեմ գրքէն որ նոր լոյս տեսաւ ի Կ. Պո-
լիս, տպագր. Յ. Մատթէոսեան։—Դուրս Դ.
—«Սիրոն և անքննելին Աստուած»։

ԽԱՍՏԱՆՍԸ



Աւակերս եր դեռ տղան ու աղջիկըն ալ ունի.
Աղջկան անունն էիզ, տղուն անունը Ֆիրմէն,
էիզ կողովը քեւէն, ան պայուսակը ուսէն
Կախած, դպրոց կերթային միշտ միասին, ձեռք ձեռքի։

Իրիկուն մը Ֆիրմէն խիստ մօտէն փայտ աղջկան,
Վարդենիներն այդ պահուն ի՛նչ անուշ կը բուրէին,
էիզ՝ կամաց մը—ինչպէս եկեղեցին կը խօսին—
«Պիտի սիրեմ քեզ, ըսաւ, երբ ըլլամ փոքր տղան»։

Տասներհինգին մեռաւ բայց։ Տղան լացաւ դառնապէս։
Օր մը տարին աղջիկը նեղ փոսի մը մէջ դրին,
Ուր հիմա կը բնանայ ներմակներու մէջ, լուին,
Վարդենիի մը տակ՝ զոր իր բարեկամը սնկեց։

Հինգ տարի ետքը տղան, իրիկուն մը, հոն դարձին,
Իրենց այդ հին միամիտ սիրոյն վրայ խորհելով,
Ծնադրեց Էլիզբէն գերեզմանի տարին փոխ.
Վարդենիներն այդ պահուն ի՛նչ անուշ կը բուրէին։

Եւ մինչ տղան, ծնադիր, հին խոստումը կը յիշէր,
Համբոյրի մը հրապարակ զգաց լանկարձ շքոյնէն.
Ծաղիկէն՝ եր համբոյր—սարսուռ մը պատեց հոգին
Քսան տարու կ'ըլլար հիշող վաղամեծիկն այն գիշեր։

ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԷՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐ

Բ.

Ուրիշ պատրանք մըն ալ .

Պայծառ անունով աղջիկ մը Սամաթիա-յէն, պզտիկ տարիքէն որը մնացած, անտէր, անպաշտպան, աւուր հացի կարօտ, բայց ասոր հետ մէկտեղ, շուտիկի չափ խելացի և հրեշ-տակի պէս աղուոր. մինչև իր քսան տարու հասակը հեռաւոր ազգականներու քով իբրև սպասուհի ծառայելէ ետքը, — վիճակ մը որու միջոցին քանի մը ոսկի վաստկած էր և վրայ տուած՝ ինչ որ ամէնէն շատ թանկագին կ'ու-նենայ աղջիկ մը, — օր մըն ալ սալայատակին վրայ գտած էր ինքզինքը :

Իր առջև երկու ճամբայ կը բացուէր, վարժուհիութիւն, և... Բերան :

Վարժուհի ըլլալու համար բաւական հայե-րէն գիտէր և Բերա անցնելու համար... չաթ-փաթ ֆրանսերէն մը : Գաղղիերէնը կատա-րեւագործելու համար դիմաց անցաւ և սեն-կակ մը վարձեց :

Ինչ ընէր խեղճ աղջիկը . ոչ առաջինն էր ինքը և ոչ ալ վերջինը :

Սա հայիւր ըրած էր թերևս : — Վարժուհի ըլլալը լաւ բան է, իրաւ, բայց ամսական մը առնելու համար մինչև իրիկուն ոտքի վը-րայ մնալու է, մինչդեռ իր նոր դիրքին մէջ... ոտքի վրայ կենալու պէտք չկար պա-տառ մը հացի համար :

Փոխանակ միտքը յոգնեցնելու՝ աւելի դիւ-րին գտած էր յոգնեցնել մարմինը և այս սկզբունքներով արիացած՝ օրուան է'ն թարմ և էն շատ վնասուած պէտքին եղած էր :

Նախ Պայծառ անունը վրայէն նետած էր — որ վարժուհի կը հօտէր — և նոր անուն մը փոխ առած էր, Քլէր :

Այս փոփոխութիւնը ոչ ոքի վնաս կուտար : Պայծառին տեղ Քլէր. — Նորայրի բառարանը անգամ բան մը չէր կրնար ըսել ասոր :

Ես՝ Քլէր եղած ատենը ճանչցայ զինքը :

Ո՛վ կ'ըսէր թէ այդ աղջիկը Սամաթիա

ծնած էր : Distingué, ազնիւ հով մը ունէր վրան որ ամէնքս կը զարմացնէր :

Աղջիկներ կան որ կորսուելուն պէս՝ ինք-զինքնին կը դռնեն. ասոնցմէ էր Պայծառ, ներողութիւն, Քլէրը :

Յոռեանները անգամ եւրոպական չգիտեմ ինչ մը կը գտնէին իր վրան որով վարժու-հիութենէ խոյս տուող այդ աղջիկը շատ փայ-լուն դիրք մը չինած էր իրեն՝ զբօսասէր աշ-խարհին մէջ :

Իրիկուն մը Մեծ-Փողոցին մէջ կը հան-դիպիմ իրեն :

— Բարիդէն մենք թէաթրօճի մը եկեր է եղեր, իրա՞ւ է .

— Հա՛, ի՞նչ կայ որ... :

— Խաթէրս համար, լօճա մը բռնէ՛ տէ-երթանք :

Եւ իրաւ ալ այդ միջոցին Տէրէմս, Բա-րիզի Օբէրայի թէնօրը, Պոլսոյ մէջ քանի մը ներկայացում տալու եկած էր և այդ դիշերը Սէն Սանսի Սանսոն եւ Տալիւան պիտի տային :

— Շատ աղէկ, այս գիշեր չնորհքով հագ-ուէ տէ քեզի տանիմ :

Պատուիրածիս համեմատ, իրաւ ալ à tout casser արդուզարդ մը տուած էր Քլէր, զոր առանց ամէնալու կրնայիր օթեակի մը թա-ւիչին կռթնցնել տալ :

Բերայի Նոր Թատրոնը այդ գիշեր արտա-սովոր կերպով փայլուն էր : Տէրէմս հինգ անգամ բեմ կոչուեցաւ որոտընդոստ ծափա-հարութեանց և անհամար ծաղկեփունջերու միջև :

Քլէր, որ կեանքին մէջ տտանկ chamb-réeի մը ներկայ գտնուած չէր, ոտքերը գետ-նէն կը կարէին... երկու սրունքներու մէջ սպղիւելու համար :

Երբ ներկայացումը աւարտեցաւ, առաջար-կեցի իրեն պզտիկ սուրբ մը Centraleի մէջ :

Ճամբան արդէն ճաշացուցակը չինած էի : Քանի մը ոտտրէ, պիֆթէք մը, պզտիկ օւ-լէթ մը, չի՛ մը ճերմակ գինի, պանիր, պը-տուղ և վրայէն դաւաթ մը պէնէտիքթին :

Կը նստինք սեղանի մը առջև և կը հար-ցընեմ թէ օմէթթը՞ առաջ կ'ուզէր թէ պիֆ-թէքը :

—Բերանս փշրանք դնելու ախորժակ չու-
նիմ, սանկ տաք տաք բան մը ըլլար ուէ խը-
մէի:

—Կաւդես նէ կաթ մը առ, չօքօլա մը:

—Կրողըս տանի սա չիքօլաթը, սալեայ
ուռինն նէ թող բերէ:

Սալէ պ... պէրուհիի մը հետ Տէրէմար մը-
տիկ ըրէ, Սանսօն եւ Տալիլան տեսիր եւ
անկէց ելիր դնա... սալեայ խմելու,

Ի՜նչ պատրանք:

Վերջին մըն ալ:

Օր մը, խմբագրատան մը մէջ, Կ. Պոլիս,
շարժաթիւթի մը վարիչին հետ՝ որուն շա-
հակից կամ ընկերակից էի:

Ուրիշ պարագաներու մէջ, երբ օր բառը
կը գործածենք, անպատճառ ածական մը կը
դանենք տալու. զոր օրինակ, տաք օր մը՝
կըսենք՝ աղուոր օր մը, անձրեւոտ օր մը,
տխուր օր մը, երջանիկ օր մը, ևայլն: Հայ
խմբագրատուններուն համար՝ օր բառը մէկ
ածական միայն ունի,—նեղ:

Նեղ օրուան մը մէջ, ուրեմն, Հրեան որմէ
թերթին տպագրական թուղթը կը դնէինք,
տնկուեր ստակ կ'ուզէր: Ճիշդ այդ օրն ալ,
Ալեքսանդրիոյ գործակալէն 200 ֆրանքի
գումար մը կը սպասէինք:

Հրեան լօլօզած պահուս, բազդէս բօսթա-
յին ցրուիչը ներս կը մտնէ և յանձնարարեալ
նամակ մը կը դնէ դրասեղանիս վրայ:

Սպասածնիս է, այո՛, Ալեքսանդրիայէն,
յանձնարարեալ և մանաւանդ գործակալիս
en-tête կայ պահարանին վրայ:

Երկու հարիւր ֆրանքը եկաւ:

—Ուզուն էթտին, նա՛, իշտէ փարա կէլ-
տի, պիրազ պէքլէ:

Թնայարանօք կը բանամ նախակը:

«Սիրելի խմբագիր,


«Ստացայ ապրիլ 4 թուականով նամակդ
և կը հաստատեմ իմ նախորդ շարթուան
նամակս:

«Ինչպէս արդէն խոստացած էի, ներփակ
պիտի գտնէք 200 տողով բանաստեղծութիւն
մը...»:

Երկու հարիւր ֆրանքի տեղ... երկու
հարիւր տող ոտանաւոր զրկած էր առ հաշիւ:

ՅԵՐԵՂԱՆԹԻՍ

ԱՐՅՈՒՆՔՆԵՐՍ



Ո՛հ. լալ կուգեմ, պզտիկ տղու մը պէս լալ,
Սուրբ պատկերին դեմ երկիւղած ծնրադիր
Արցունք քափող բարեպաշտին պէս բլլալ.
Ի զո՛ւր սակայն, արցունքներս չեն յորդիր:

Աւխարհի մեջ, բայ իգրկեդ կեցունակ.
Եւ ոչ մէկ տեղ կրնամ քափել արցունքներս.
Եւ բաժնուած օրես ի վեր շարունակ
Անոնք կերբան իյնալ, լեցուիլ արես ներս:

Կը կուտակուին, կը դիզուին հոն օրե օր
Կաթիլները այդ փառացած ու ճնշող,
Որք արեւս վրայ պիտի մնան մինչեւ որ,

Գլուխս հանգչի լանջքիդ վրայ սասափե
Եւ սիրալաւ ճայուածքեդ մէկ փրփած շող
Այդ փառակոյսն հալեցընէ դուրս քափէ:
Վ.

ՄԵՂԱՆՉՈՒՄԷՆ ԵՏՔԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

«Դայի տեսայ Էօթէնին՝ իր հողակոյտը
Շիշլիի գերեզմանատունին մէջ, հեռուն
թաղուած այն բոլոր հարուստ ու փառաշուք
դամբաններէն որոնք քով քովի կը հանդէն
հոն:

«—Տե՛ս, ըսաւ ինծի պահապան մը որ
տօնի այդ օրը հոն եկած էր, Էօթէնիին պատ-
կերը, նա՛: Ու միջակէն վեր գեղեցիկ աղջը-
կան մը պատկերը զարկաւ ինծի, սե խաչին
թեւերուն վրայ ամրցուած: Վարը ինքն էր՝
հանրակին Էօթէնին, որ դաշոյնի հարուածին
դո՛հ կ'երթար անցեալ տարի, ու յետոյ հայ
կղերներ կը դանուէին այն ատեն որոնք ե-
կեղեցիին ու Բրիտտոսի անունովը կը պըն-
դէին որ չպէտք է թաղել Էօթէնին մեր գե-
րեզմանատունին մէջ, չպէտք է աղօթք կար-
դալ անոր վրայ:

«Ու այս դէպքերէն վերջը՝ ա՛լ չկրցի ես

ինքնիրենս հաշտեցնել քրիստոնէական ներողամտութիւնը մարդկային մոլորանքին հետ, ու զգայի ահարկու մատը խաբկանքին որ մեղ կրնարս մինչև ուրեր կը հասցնէ... այնքան թոյլ ենք մենք ու այնքան պղտասէր»:

* *

Այսպէս կը խօսէր այն օրը քոյր Արաքսի, ու սովորականէն աւելի տխուր կ'երևէր ինքը: Տարօրինակ անցքեր տեղի ունեցած էին իր կեանքին վրայէն, ամէն օրուանը չէր վերջապէս: Ա' արժէք չունէին իրեն համար տղամարդերու բոլոր առաջարկները ու քրքրանքները: Ընդհակառակը կ'ատէր ամէնը: Ու ինքը որ միշտ թոյլատու գտնուած էր եղական կամէականութիւնով մը բոլոր իր սիրածներուն հանդէպ, այնքան առատօրէն ըմբոյնած էին զինքը, այնքան յաճախ լացի արցունքներով ողողած էին զինքը որ, ուզած էր չարչրկուիլ միշտ այնքան բուռն պահանջումներու տոկալով: Հիմակ այնպէս չէր:

Արաքսի կըզգար բովանդակ ինկածութիւնը իր կեանքին՝ մեղկ ու ծոյլ գործունէութիւնով մը իրականացած սակայն, որին մէջէն չէր իսկ կրցած գտնել իրեն համար մշտնջենական ընկերակից մը: Ինք բոլոր իրեն դիմողներուն հետ ուղած էր առաջին առիթով մտերմանալ, անկեղծ ու շատ միատախ մէջ մը տածել, գգուել անոնց սիրտը: Ու ամէն անգամ որ չէր կրցած յաջողիլ, փորձած էր նոյնը ուրիշի մը, այն յոյսով որ ատիկա գոնէ պիտի կրնար զինքը սիրած ըլլալ խորունկէն, ու յօժարէր գթալու իրեն պէս աղջիկի մը՝ առաջնորդելու համար աւելի տարբեր ու ընդհանուրին եղող կեանքի մը: Միատեղ ամուսնանային պիտի, կ'ըսէր ինք, զաւակներ ալ պիտի կրնային ունենալ առանց արգելքի ու երջանիկ ըլլային:

Բայց տղամարդեր չէին զգար ինչ որ Արաքսին կ'ուզէր ըսել խորունկէն, ու ինքը՝ հէգ աղջիկը՝ տարիներով քաղաքացի էր չաբունակել այդ կեանքը, մաքուր կարենալ հագուելու համար, ու վերջապէս ասլուելու համար:

Ահալիօրէն մոլին եղած էր պղտանքին, ու վերջէն շատ տարիներ ետքը միայն կրցաւ

ըսել որ ինք երկու տասնեակ շրջադէպներ ունէր, ու գրեթէ երկվեցեակ մը լայնեղր ու ամէն կարգի գլխարկներ, այն ատեն: Ու դեռ չմոռնալու համար ծրար մը զարդեղէնները զորս մինչև այսօր պահած է այնքան զաղտուկ կերպով ու ամէն անգամ որ սրնատակին մէջ հանդիպած է իր աչքերը ատոնց, ետ ետ մղուած է ինքը զարմանալի գարշանքով մը:

Ու ես կը մտածեմ որ ինչպէս կարելի է ճշտել այս զարմանալիօրէն տարօրինակ կեանքին դէմդէմութիւնները, միշտ կրկնուած ու երեքլնուած, ինքզինքին ենթարկած փոփոխականութիւնները, որոնց նկատմամբ հիմակ իր մեկուսացողի օրերուն մէջ կը հետաքրքրէ ուրիշները միշտ այլազան նկարագրութիւններով:

* *

Արաքսի որը մնացած էր շատ պղտիկ հասակէն: Բարեսիրտ մարդեր՝ որոնց նպատակը ոչ ոք կրցած էր վեր առնել, աղջիկներու յատուկ ծանօթ վարժարան մը դրին զինքը: Միշտ հոն կը մնար Արաքսի, գիշերներն ալ ընկերակից աղջիկներու հետնոյն յարկին մէջ: Տեսչուհին ծայր աստիճան խնամք կը տածէր Արաքսիին հանդէպ:

Տարիներ անցած էին: Ազգականներ իրենց շահագիտական կարգ մը նկատումներովը չէին իսկ անգամ մը հետաքրքրուած իրմով: Օրը օրին զարգացած ու առաւելապէս գեղեցկացած էր բոլոր ընկերուհիներուն մէջ: Տեսչուհին՝ որ կրօնաւորուհի մըն էր Գաբուշինեան կարգէն, անհուն խնդումներ կ'ունենար տեսնելով որ Արաքսին իր պարտաւորութիւնները լաւ կը կատարէ:

Ամիսը միայն մէկ անգամ կ'արտօնուէր որ մասնաւոր աղջիկներ կարող ըլլային քանի մը ժամուան դուրսի պտոյտներ ունենալ, դրացի վանքերը յաճախէին ու այսպէսով քիչ մը կաղզուրուէին: Ու ասիկա կը կատարուէր միշտ հաստատութեան մասնաւոր կառքերով:

Ամառի գաղջ օրերէն մէկն էր: Արաքսի արդէն քանի օրուան հիւանդ մըն էր, գլուխի պտոյտներ կ'ունենար միշտ, ու ընդհա-

նուր թուլութիւն մը: Առտուան աղօթքէն վերջը, կին մը ու երկու մարդեր ներկայանալով Տեսչութիւն, խնդրեցին որ Արաքսիին թողալու թիւն ըլլայ քանի մը օրուան համար: Համոզիչ փաստերով կը պնդէին որ իրենք մօտիկ յարաբերութիւններ ունէին աղջկան ծնողքին հետ և թէ իրենց զաւակը կը նկատուէր անիկա:

Վեց օր վերջը Արաքսիի կողմէ ստորագրուած թուղթ մը բերին Տեսչութիւն որով կը յայտնէր թէ բացարձակապէս անկարելի կը գտնէր անգամ մըն ալ վերադառնալ իրենց մօտը և թէ հիմակուան կեանքը աւելի հրապուրիչ ու գործնական կը գտնէր քան զըսորոց—մարապետանոցի կրօնաբոյր ու ճնշիչ օգը:

Լման տասը տարի * * վարած էր իր նոր կեանքը՝ որին վրայ տեղեկացան արդէն ընթերցողները մեր պատմութեան անջի մասին մէջ: Իրական կեանքէ վրցուած ու չորցած աղջկան մը՝ Էօթէնիին վախճանը սարսափեցուցած էր զինքը: Երբեմն ընկերակիցներ եղած էին անոր հետ, նոյն գարշաբոյր գետնին վրայ. վերջէն դատուած էին, տարբեր թաղերու մէջ ու տարբեր յարկաբաժիններու մէջ: Ու տարիներով իր սէրին մէջ յուսալիսութիւններու և խաբկանքներու հանդիպած էր միշտ: Մարդ մեղքացած չէր իր վրայ, ոչ ոք նկատած էր զինքը իրականին մէջ զգացող մարդ էակ մը, որ տառապանքներու կ'երթար կուր: Ու սիրած էին քանի մը վայրկեանի համար: Գիշերը, հոմանիներու հեռանալէն վերջը, խորունկէն կուլար ինքը, ու կը զգար ծանր բեռ մը իր վզին վրայ որ միշտ վար, շատ վար կը ճնշէր զինքը:

Թողուց զպրոցը խաբէութեան մը զոհեղած, ու բոլորովին ակամայ ստորագրեց այն նամակը որ տեսչութիւն կ'իմացնէր իր բացարձակ հեռացումը դպրոցէն:

Ու հիմա, խոշոր նողկանքով մը՝ կը թողէր հանրատունը՝ ուր բոլոր մը մարդկային հոգիներ կը հիւծին զքօնելու համար բոլորովին անիմաստ ու անամուսին, և ուր սակայն ընտանիքներու հիմերը կը քայքայուին մարդկային ընկերութեան ու քաղաքակրթութեան դրած նոր ու այլանդակ կարգուսարքերով սակայն:

* * *
Ու հիմակ աչքիս առջև կուգայ դալկացած դէմքը Արաքսիին, ու չեմ կրնար մեկնաբանել տարիներու մեղանշումէ մը ետքը անոր այս դարձը դէպի վանք, իբր նոր ու բոլորովին տարբեր Արաքսի մը՝ և որին իսկութեանը վրայ—շատ տարիներ վերջն իսկ—մայրապետներու մէջէն կասկածի աչքերով նայողներ չգտնուեցան:

Տարօրինակ դադանիք մը ինքնին, որ ծրարած ունի իր ներքը, աշխարհիկ ու բոլորովին գետնաքարչ կեանքի մը ըմբոսնումէն վերջը սակայն այնքան անյազօրէն:

Հիմակ ինքը Արաքսին՝ վանքին բոլոր կոյսերէն աւելի ճիշտ կը տրամաբանէ կեանքին նկատմամբ, ու բոլոր անոնցմէ հեշտ կը թուի իրեն նոր ու այլանդակ այս չարահաւանքները կրօնական կաշկանդումի: Ու յետոյ, անոնցմէ աւելի պատճառներ ունի այս երկու կեանքերուն ալ ծիծաղելիութիւնը զգալու... մեղանշումէ ետքը սակայն:

ՅԱՐԸՍՏ ՆՈՐԻՍ

ԻՒՆԻՍՏ Ապահովագրական Ընկերութեան գործառնութիւնները, թէ՛ հրդեհի և թէ՛ կեանքի ճիւղին մէջ, զգալապէս ընդարձակուած ու բազմացած են 1902 տարեշրջանի միջոցին, որուն վաւերական հաշուեցուցակին գումարները արձանագրած ենք ընկերութեան Ծանուցմանը մէջ որ կ'երեւայ Մասիսի կողմէն վրայ: Հրդեհի ճիւղին հասոյթը (այսինքն գանձուած ապահովագրիներու գումարը) 19½ միլիոնէն բարձրացած է 24 միլիոնի և կեանքի ճիւղինը՝ 12 միլիոնի: Հատուցուած վնասն է. Ընկերութեան հիմնարկութենէն մինչև 1902ի վերջը, առաջին ճիւղին համար՝ 274 միլիոն և երկրորդ ճիւղին համար՝ 129 միլիոն: Դրամագլուխ և պահեստ՝ 119 և 158 միլիոն ֆր: Ապահովագրեալ դրամագլուխ՝ հրդեհի ճիւղին համար՝ 27½ միլիոն և կեանքի ճիւղին համար՝ 272 միլիոն ֆր:

Սոյն թուանշանները, որոնք կը ներկայացնեն ԻՒՆԻՍՏի ընդհանուր գործառնութիւնները՝ աշխարհի ամէն մասերուն մէջ, անգամ մըն ալ կը հաստատեն այն վարկը ու համարումը զոր Ապահովագրական այդ մեծ Ընկերութիւնը կը վայելէ՝ նաև Արեւելքի մէջ որուն կեդր. Տնօրէնութիւնը այնքան լաւ ձեռքբերու մէջ կը գտնուի, օրինակելի ճշդապահութեամբ ու պատուաւորութեամբ գործելով միշտ:

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Ս. Պատրիարքը չորեքշաբթի օրը Կայս. Պալատ երթալով, ի դիմաց Աղգին խորին ցաւակցութիւն յայտնեց Վեհ. Սուլթանին կրտսեր որդւոյն՝ կայսերազուն իշխան Ահմէտ Պէտրէտտին էֆէնտիի մահուան առթիւ, և բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Կ. Վեհափառութեան արեւշատութեանը համար:

Պատուաւեացան:—Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Գ. կարգի Մէծիտիյէ պատուանըւն շնորհուած է սեղանաւոր Միքայէլ էֆ. Արիսողոմի, անդամ Գաղղիւղի վարժարանին Հոգաբարձութեան, և Դ. կարգի Օսմանիէ պատուանշան՝ վաճառական Բարսեղ էֆ. Աւետիսեանի, անդամ Ուսումնական Խորհրդոյ:

Գալթայեան Որբանոցին վերաշինութեան ի նպաստ Գրիգոր էֆ. Գարակէօղեան նուիրած է 50 ոսկի, Յովհաննէս էֆ. Յակոբեան 30 ոսկի և Միքայէլ էֆ. Յակոբեան 30 ոսկի:

Խառն ժողովի վերջին նիստին մէջ կարգացուեցաւ Էջմիածնէն սեպտ. 16 թուականով Ս. Պատրիարքին ուղղուած ընդարձակ սեղեկագիր մը, ուսկից կը հասկցուի որ Ս. Հայրապետին Բեղերապուրկ զրկած գիրը սեպտ. 12 թուականը կը կրէ: Մայր Աթոռ դպող 8 պաշտօնեաներ, կալուածահամարի և ստացուածոց արձանագրութեան և կնքման օրինական ծանօթ գործողութիւնը կատարել են նաև Մայր-Աթոռոյ մէջ՝ առանձին գործելով և գործադրելով իրենց տրուած հրահանգը: Տ. Արիստակէս Արքեպիսկ. Սեդրաքեան սեպտ. 15ին և Տ. Սուքիաս Արքեպիսկ. երկու օր վերջը պիտի ներկայանային Ռուսիոյ Ներքին գործոց նախարարին՝ Սամարաքաղաքին մէջ:

Բարբոզ Էֆ. Թեկեան, Կեդր. Վարչութեան պատուիրակը՝ Երուսաղէմի Ս. Պատրիարքին մօտ, յառաջիկայ երեքշաբթի կը մեկնի մայրաքաղաքէս, երթալ կատարելու իր առժամայն՝ բայց կարեւոր պաշտօնը:

Ռօսոսքոյի աղգ. վարժարանին Հոգաբարձութիւնը չատ լաւ ընտրութիւն մը կատարեց

աղջկանց վարժարանին ուսուցչուհի կարգելով Օր. Ալիսէն Գրիթիկեանը որ վեց տարուան բարձր քաջատօնավարութիւն մը ունեցած է Գաղղիւղի Արամեան վարժարանին մէջ: Օր. Ալիսէն չորեքշաբթի օրը մեկնեցաւ Ռօսոսքոյ:

Քարոզի մրցում. — Վաճառական Թաւշանձեան էֆ. ի նպաստով հաստատուած քարոզական մրցումին համար մինչև ցարդ հետեւեալ գրական անունները կրող քարոզներ հասած են Պատրիարքարան. — Արայեան Արա. — Արթուր. — Արձանիկ. — Աւետարանիչ մը. — Գամէր. — Գիււտ. — Դեռնդ. — Ներսէս. — Նըժդեհ. — Շինական. — Վերծանող. — Տրուպ. — Փառնակ. — Թիւ 27, 113: — Յայտնի է որ՝ այս մրցման մասնակցողներն իրենց բուն անունները պիտի չյայտնէին, այլ մէջ մէկ գրական ծածկանուն կամ թիւ պիտի կրէին: Մինչև հոկտ. ի վերջը պիտի ընդունուին գալիք քարոզները, և անկէ ետքը պիտի սկսի քննութիւնը: 16ի չափ մրցանակ պիտի տրուի:

ԳՐԱՆԱԾԱԾ ԽԱՐԱԿԱՆ

Պետական Խորհուրդի անդամ Վսեմ. Զարեհ էֆ. Տիւպէր, որ իր պարապոյ ու ներշնչման վայրկեաններուն մէջ ֆրանսերէն բանաստեղծութիւններ կը գրէ, որոնց գեղեցիկ նմոշները կ'երեւան երբեմն Սգամպուլի ու ֆրանսերէն Սերվիզի մէջ, այս վերջինին սեպտ. 17/30ի թիւին մէջ «Նէմօ» գրական ծածկանունով քերթուած մը ձօնած էր Բիէռ Լօթիի որ, ինչպէս յայտնի է, Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպանատան Վօդուռ պահակախաին հրամանատարութեան կոչուած է: Իսլանմայի Զկնոսին հեղինակը՝ Տիւպէր էֆ. ի ոտանաւորին պատասխանած է համակրական նամակով մը որուն աւասիկ թարգմանութիւնը.

«Սիրելի Պարոն,

«Պ. Պաքուդի բարեհաճ միջնորդութեամբ ստացայ չքնաղ քերթուածը որով կը հաճիք ողջունել իմ վերադարձս՝ իմ սիրելի Կ. Պոլսիս:

«Կարի յուզուած և չփոխած եմ այն մը»

տածումներուն առջեւ զորս այնքան սիրուն
կերպով կ'արտայայտէք: Սրտագին չնորհա-
կալութիւնս կը յայտնեմ Ձեզ: Ինձ համար՝
բարեբաղդութիւն պիտի համարիմ տեսնել
դՁեզ, երբ Վօղուռը դառնայ Թօփհանէ, եւ
անձամբ լաւագոյն կերպով յայտնել Ձեզ չը-
նորհակալիքս:

«Ներեցէք ինձ, սիրելի Պարոն, սեղմել
Ձեր ձեռքը յոյժ մտերմօրէն»:

ԲԻԷՌ ԼՕԴԻ

ԱՆԳԼ. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԻՐՈՅ ՀՈՐԻՉՈՆԵՐ

(ՄՕՐԻՍ ՅՈՄԱՆԸ)

Երկինք նման է կնոջ սիրոյն. ով կէտն
ալ՝ այր մարդուն սիրոյն. բայց ոչ վերի եր-
կինքը զիտէ իր անսահմանութիւնը, ոչ ալ
վարի ով կէտնը:

Ով կէտնը կը թաւալի մոլեղնաբար և ան-
սանձ, և կը գոռայ աշխարհի շուրջը և իր
անողոք ալիքները կ'արձակէ խարանկներուն
ու խորտակուած նաւերուն բեկորներուն վրայ:

Երկինք ունի հոծ, մթին ամպեր և անձ-
րեւներու յաճախադէպ տարափը. երբեմն փո-
թորիկները երկարատեւ են և անեղագոյ, ու
վայրագ հովերը կը մռնչեն հոն, ու փայլակ-
ները կը սլանան:

Բայց կայ տեղ մը, անոյշ ու հեշտ տեղ
մը, ուր զմայլելի կապոյտը կը խոնարհի և
ուր ով կէտնը վեր կը ցատկէ ողջագուրդու
համար այդ քնքուշ ու աղուոր երկինքը:

Հոն, այդ դժին բովանդակ երկայնքը ա-
նոնք իրարու կը հանդիպին ու կը միանան.
և ո՛վ կրնայ դէթ կիսովին գուշակել թէ
ջերմ զմայլանքի ի՞նչ արտայայտութիւններ
կը ղեզուեն հորիզոնի այդ դժին վրայ:

Երկինք կը նմանի կնոջ սիրոյն, ով կէտն
ալ այր մարդուն սիրոյն. և ոչ երկինքը կ'ե-
րազէ իր անսահմանութիւնը, ոչ ալ ով կէտնը:

Թարգմ. անգլ. ԼԻԼԻԱ

ԱՌՈՒՅԱԿ

Ո՛վ իմ սրբտիս ազնիւ հատոր
Դու կարկաջուն առուակ վրճիտ,
Որ ման գալով ոլոր մոլոր,
Կ'արձակես միշտ սիրոյ ժըպիտ:
Ի՞նչ սիրուն են քու աղեակներ,
Կը հետեւին սա լուսնակին՝
Որ կատարէ լայն պտոյտներ
Կապուտագարդ մէջ երկընքին:

Մէկ հատն ալուոյդ պայծառ ու զով,
Իբր աղամանդ կը շողշողայ,
Եւ հողմն անուշ թեւածելով
Հոն՝ կարծես ինձ սէր կը կարդայ:
Կը սըլանաս կայծակ սրաթեւ,
Հանես աղեակ, չինես փըրփուր,
Հիացընես երկնի վերեւ
Մոլորակներ կամարին՝ բիր:

Լուսընկային լուսովն աղօտ
Քայլերը երբ կ'առաջանան,
Ու կը հանգչին ափերուդ մօտ,
Վիշտրս ու ցաւս կը հեռանան.
Ձր սիրտըս հոն կ'առնու թեւ նոր,
Կը թըռչտի վըրադ հեղինկ,
Մերթ սուզելով մինչև քու խոր:
Ո՛հ այն ժամը ի՞նչ երջանիկ:

Սիրեմ ըզքեզ, ո՛վ իմ առուակ,
Սըրտովս համայն, սիրով մ'անհուն,
Ձի յօրինես երգ ներդաշնակ
Իբր ըսփոփանք հոգւոյս տըրտում:
Լուսինն, առուա՛կ, ինչպէս վերէն
Կը դիւթէ մեզ իր շողերով,
Կարկաջումովդ դուն ալ վարէն
Տո՛ւր իրեն քու սիրոյդ դորով:

Բերա

ԱՐՄԵՆԱԿ Ք. ԵԱՆՈՒՊԵԱՆ

1904ի պարզ Օրացոյցը, որ Ս. Փրկչի
Հիւանդանոցին սեփականութիւնն է, հրապա-
րակ ելած ըլլալով արդէն, Ս. Պատրիարքը՝
յատուկ կոնգակով՝ հրաւէր և յորդոր ուղղեց
հաճութեան, փութալ դնել մէյմէկ օրինակ
այդ Օրացոյցէն, որ թէ՛ իրենց առօրեայ պէտ-
քերուն դոհացում կուտայ եւ թէ՛ նպաստ
մը կը գոյացնէ Հիւանդանոցին:

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

(LILLIAN MORRIS)

5.

Գրեց ՀԷՆՐԻԻ ՍԷՆՔԻԻՎԻԶ.

Թարգմ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՖ.

Թանձրախիտ յատակէն վեր կը սլանային փլուփուր ճապուկ ցօղունները. չորսդէին կերկարէին խուրձերը տունկի մը՝ զոր «լաց» կը կոչեն հոս, անոր համար որ իր պղտիկ թափանցիկ գնդիկներէ կաղմուած ողկոյղները, իրաւցնէ կը նմանին արցունքներու: Աչքերս մարդագետիւնին ամէն մէկ գաղտնիքին թափանցած արդէն, ատենով շշմարուած բոլոր բոյսերը կը գտնային ու կը ճանչնային նորէն. լայնասաղարթ քալումիան, որ վէրքեր կը բուժէ. այն տունկը՝ զոր «ճերմակ-կարմիր գուլպայ» կը կոչեն և որ իր ծաղիկները կը գոցէ, մարդ մը կամ անասուն մը իրեն մօտեցած ատեն. վերջապէս հեղկական հաշիշը, որուն հոտը քունդ կը բերէ և զրեթէ կը մարեցնէ: Լիլիէնին կարդալ կը սորվեցնէի երկնային այդ զիրքին մէջէն և կ'ըսէի իրեն.

—Օր պիտի ըլլայ որ պէտք պիտի ունենաք մարդագետիւններու կամ անասուններու մէջ ապրելու, լաւ կ'ընէք ուսումնասիրելով զանոնք:

Տեղ տեղ բամպակենիներու ու օշնենիներու (aulne) բոյլեր ովասիսներու պէս կը համախմբուէին, այն աստիճան սերտօրէն խառնուած՝ վայրի որթատունկերու ու ճկեանիներու (liane) հետ որ դժուարութիւն կը քաշէր զանոնք ճանչնալու եւ զանազանելու համար: Ճկեանիներուն ալ, իրենց կարգին կը պլլուէին բաղնդներ, վայրի վարդի նմանող սրտափուշ ուտքթիւններ: Ծաղիկները կը բացօռէին ամէն կողմէն. և այդ ցնորային, խօլակիւն բուսականութեան տակ, խորհրդաւոր մթութիւն մը կը տիրէր: Ծառերուն ոտքին տակ կը նիւրհէին լայն ջրիոյաներ զորս արեւը չէր յաջողեր ը պալել. բաղմագոյն զանգուածին մէջէն հրաշալի ձայներ, և անթիւ թռչուններու կոչեր կը բարձրանային: Երբոր առաջին անգամ Լիլիէնի ցոյց տուի այդ տարօրինակ ծառերը ու ծաղիկի այդ շատրուան-

ները, կանգ առաւ ան, յանկարծ, երկիրէն խլուած անշատուածի պէս և ձեռքերը իրար բերած, միացուցած, կրկնելով.

—Օհ, Ռալֆ, երա՞զ է տեսածս արդեօք: Կը վախնար կանանչութիւններով կաղմուած մութ խորշերուն մէջ մանալու. բայց կէսօրէ մը վերջ, երբ տաքը սաստիկ էր և մարդագետիւնին վրայ թէքսառն փնդ հովը՝ անհանդուրժելի, մտանք անոնց մէջ երկուքնիս մէկ, և Գէթթի ետեւումս եկաւ:

Կանգ առինք պղտիկ ըմակի մը եզրը որ մեր ձիերը ու մեր մթագոյն դիմաստուերները կը ցոլացնէր. պահ մը անձայն կեցանք հող: Տերեւուտքէ կամարը մթամած էր ու հանդիսաւոր, դոթական մայր-եկեղեցիի մը ներքնամասին նման և տեսակ մը կրօնական երկիւղածութիւն կը ներշնչէր: Գուրսի լոյսը, շատ մեղմացած, գրեթէ մարած և կանանչ ցոլքերով լեցուն էր ներս թափանցած ատենը: Ճկեանիներուն գմբեթարթին՝ մէջ ծածկուած թռչուններ «Չէ, չէ, չէ» կը ճչէին, կարծես իմաց տալու համար մեզի որ աւելի անգին չերթանք. Գէթթի կը դողդղար և ձիերուն տակօքը կը կծկտէր: Եւ յանկարծ Լիլիէն ու ես իրարու երես նայեցանք, համակուած այն յուզումով՝ զոր այդ աստիճան մեծաքանակ տեսարան մը բնականօրէն առաջ պիտի բերէր մեր հողիներուն մէջ և ձեռքը ձեռքիս մէջ, լուրջ նայուածքով մը ու սիրտը խորապէս աղբուած, Լիլիէն մտիկ ըրաւ. անսահման պաշտամունքիս յայտարարութիւնը, սիրոյս երդումը, բովանդակ կեանքս իրեն նուիրելու համար ըրած ուխտս, և այն ապահովութիւնը՝ զոր կուտայի իրեն, որով կը խոստանայի իրեն, չունենալ մտածում մը՝ որ իրեն չի վերաբերէր, ծրագիր մը՝ որ զինքը չունենար առարկայ և փախաք մը՝ որ իր երջանկութեանը չի ձգտէր:

Գոցեց աչքերը, գլուխը խոնարհեցաւ.

կուրծքիս վրայ և զգացի որ բոլոր մարմինով
կը դողդղար: Եւ այդ չափազանց ուժգին
յուզումին ազդեցութեանը տակ, անուշիկ ա-
րարածը նուազեցաւ: Աստուծոյ առջեւ, հան-
դիսաւոր ու խորհրդաւոր բնութեան առջեւ,
նշանուած էինք իրարու: Դարաւոր ծառերը
վկայեցին, որ մեր սիրոյ կապանքներուն
լճակին անշարժ հայելին ուրուագրած էր մեր
վճիռ նայուածքները: ամէն բան ըսած էինք
իրարու: ա՛յ ոչինչ կրնար քակել այն խօսքը՝
զոր անապատին սիրտին մէջ, ինքնաբերաբար
սուած էինք իրարու:

Կանանչապատ մութ խորշէն դուրս ելանք
և մարգագետնին վրայ վերադարձանք, ուր
պայծառաչող լոյսը շլացուց աչքերնիս և ուր
կիզիչ հովը երեսնիս սկսաւ լղուռտել: Ան-
խօս ու կարծես մեղմաղձոտ կերպարանք մը
առած կեցած էինք հոն, հակառակ անոր որ
մեր հոգիները երջանկութիւնով արըշիւ էին:
Ծաղիկներու կապերով՝ անծայրածիր, կը տա-
րածուէր առջեւնիս: «Անապատին թռչնա-
հաւ»երը կը վազվտէին խոտերուն մէջ.
պղտիկ բարձրաւանդակներու վրայ ուր որ-
ջանման անհամար փոսիկներ կը պեղուէին,
«մարգագետնի շիւղ»ները կը ցատքբաշխէին ու
կը խաղային անոնց հետ: Բայց մեր մօտե-
ցած ատենը, անոնց բովանդակ երամը յան-
կարծակիօրէն կ'անյայտանար հողին մէջը խո-
րատուելով: Քիչ մը անդին կարաւանը կը
տարածուէր. հեծեալներուն ձիերը քառասըմ-
բակ ու խօլ արշաւանքներով կը խաղային
յարացունց կառքերուն ու վախճաններուն չորս-
դին:

Ինծի անանկ կուգար որ մութ սենեակէ մը
լուսաւոր աշխարհը ելած էինք. միեւնոյն
տպաւորութեան տակ կը թուէր ըլլալ Լիլիէն:
Մեծաշողջող պայծառութիւնը կը հրճուեցնէր
հոգիս: Բայց այս սաստիկ լոյսին բուռն ծալ-
րայեղութիւնը, անմոռանալի տեսարանին յի-
շատակը, կը խռովէին Լիլիէնի սիրտը և
սրտադող մը ու տրտմութիւն մը միանգա-
մայն կը պատճառէին անոր:

— Ուա՛ր՛, պիտի ներէ՞ք ինծի, ունեցած
այս տկարութեանս համար, ըսաւ:

— Օհ, անուշիկս: Թող Աստուած երեսէ

ձգէ զիս, եթէ ձեզի համար, սիրտիս մէջ
ամենախոր յարգանքէ ու ամենաբարձր պաշ-
տանքէ տարբեր բան մը կը զգագամ:

— Բոլոր հոգիովս կը սիրեմ ձեզի, ըսաւ:
Բայց իր շրթունքը կը սարսուային և ինք՝
լուիկ մնջիկ արցունք կը թափէր:

Ու թէև բոլոր հոգիովս աշխատեցայ ի-
րեն սիրտ տալու, զինքը մխիթարելու և իմ
խանդադատանքիս ջերմութիւնովը իր սիրտը
առնելու, բայց ան տխուր էր մինչև իրիկուն:

Դ

Վերջապէս հասանք Միսուրիի եղերքը:
Հնդիկները, ընդհանրապէս, կարաւաններուն
այս գետէն անցնելիք ատենին կըսպասեն զա-
նոնք յանկարծակիի բերելու համար. հոն
ինքնապաշտպանութիւնը աւելի դժուար է,
մասնաւորաբար երբ վախճաններուն մէջ մասը
ջուրին մէջն է դեռ և միւսը սեպ եղերքին
վրայ ելած արդէն, երբ փոխադրութեան ծա-
ռայող անասունները խեղ, յամառ ու ան-
տանելի կը դառնան և անկարգութիւնը կը
տիրէ կառավարներուն մէջ: Դետեղըը հաս-
նելէ առաջ, ուշադրութիւն ըրած էի որ,
երկու օրէ ի վեր ընիկներ կը սլըքտկային
մեր շուրջը. ատոր համար խոհական երեւցած
բոլոր կանխադգուշութիւնները ձեռք առի և
կարաւանը դինուորական կարգով շարուեցաւ:
Այլ արգիլեցի վախճաններուն իրարմէ հեռա-
նալը և մարդիկը ցոխուեցան համախմբուած
ու կռուապատրաստ ըլլալ միշտ:

Երբոր նոյնինքն սեպեղրին վրայ հասանք,
հրաման ըրի երկու ջոկատներու սր կրթան
ամուր դիրք մը բռնեն գետին երկու կող-
մերը, ափայտոյ շինուած ու հրացանի փողե-
րով խնդուն պղտիկ բերդերու շաշտպանու-
թեանը տակ, մեր անցքը ասլահովելու համար:

Մնացած հարիւր քսան դաղթականներուն
պաշտօնը պիտի ըլլար յուզարկախուսմին
անցքի գործողութիւնը դիւրացնել: Ծփոթու-
թեան առաջըր առնելու համար, վախճանը
պղտիկ խմբակներու բաժնած սկսայ անցնել
ջուրին վրայէն: Այս կերպով ամէն բան վեր-
ջին աստիճան կանոնաւոր եղանակով մը տեղի
ունեցաւ և յարձակում մը անկարելի կը դառ-
նար, ինչու որ յարձակողները կառատորմը

պաշտպանողներուն վրայ ինչալէ անտշ, պարտաւոր էին ամբողջներէն մէկը դրաւել :

Ապագան ցոյց տուաւ որ այդ նախազգուշութիւնները աւելորդ չէին բնաւ երկու տարի ետքը, չորս հարիւր եւրոպացի խուզարկուներ մահերնին դառն, այն տեղին վրայ իսկ ուր այսօր Օմահա քաղաքը կը բարձրանայ : Ատով անգամ մը ևս գրաւեցի վատահոլութիւնը մարդերուս, որոնք բազմաթիւ ծուղակներու եւ պարտութիւններու պատժութիւններ էին լսած, որոնք Միսուրիէն անցնելուն վտանգները աղէկ դիտէին և որոնք տեսնալով այն հաստատութիւնը ու զիրարութիւնը որով լուծեցի խնդիրը, ա'լ անկէ ետքը կուրորէն հնազանդեցան ինծի և յօժարակամ պիտի պաշտէին զիս, իր բացաւայրներու տիրապետող ոգին :

Շատ չանցած, Լիլիէն ալ միւսնոյն խանդավառութենէն բռնուեցաւ, որուն սիրալիր աչքերուն՝ օրէ օր աւելի տարօրինակ դիւցազն մը կ'երեւայի :

— Որչափ ատեն որ ձեր Բոլոնիացին քովերնիդ ըլլայ՝ ապահով կրնաք քնանալ, նոյն իսկ անձրեւին տակ. ոչ իսկ մէկ կաթիլի մը պիտի թոյլ տայ որ վրանիդ ինչայ :

Ու դեռատի աղջկան սիրտը հպարտութենէն կը ճառագայթէր : Գետին մէկ կողմէն միւսը մեր անցքին բովանդակ տեւողութեանը միջոյն, հագիւ կրցայ վայրկեան մը նուիրել իրեն, և պարտաւորեցայ անապարանքով ու նայաւածքով ըսել իրեն ինչ որ չըթուէր չէի կրնար ընել : Մինչև իրիկուն ձիէս վար չէի իջնար, և գետին մէջ մը մէկ կողմը, մէջ մը միւս կողմը, մէջմըն ալ ձիչտ միջտեղն էի : Կ'անապարէի վայրկեան մը առաջ կտրել անցնելու դեղնագոյն ջուրի այդ հոսանքը, որ իր ալեակներուն հետ փտտած ծառեր, ոստեր, տերեւներ, խոտ և տեղոտ ժահրերով ապականած Տաքթիաի հող կը թաւալցնէր :

Անկէ զատ, մարդիկս չարաչար յոգնած էին յարատե հսկումներու հետեւանքով. ձիերը կը հիւնդնային խմելով այդ վատաւոր ջուրը զոր մենք իսկ չէինք կրնար դործածել, մինչև որ փայտածուխով լեցուն խողովակներու մէջէն երկարօրէն զտած չըլայինք զայն :

Վերջապէս, ութը օրուան ջանք ու աշխատանքէ ետքը, անցանք աջ եղբորը, առանց վակօն մը կոտրած ըլլալու և հազիւ եօթը հատ ձի կամ ջորի կորսնցնելով : Եւ սակայն, այդ օրը իսկ, նետեր սկսան թօթափիլ մեր բանակետդին մէջ և մարդիկս յաջողեցան բռնել երեք Հնդիկներ, զորս գլխատեցին : Անկէց ետքը հազիւ քանի մը ժամանցեր էր և ահա Բօնի ցեղին պատկանող և «Մթին արահետ»ի բնակիչներէն վեց պատերազմիկներու պատուիրակութիւն մը ներկայացաւ մեր էն առաջապահ հսկողներուն : Պատիւով ընդունուեցան և մեր կրակին շուրջը եկան բազմիլ, տարօրինապէս ինքնապարծուկ ու թշնամանիկ նիստուկացով մը : Սպանեալներուն իրր հատուցում, ձիեր ու ջորիներ կը պահանջէին մենէ, յայտարարելով միւսնոյն ատեն որ, հակառակ պարագային հինգ հարիւր պատերազմիկներ անմիջական կերպով պիտի յարձակէին մեր վրայ : Շատ հաւատ չէի ընծայեր այդ հինգ հարիւր պատերազմիկներուն և եթէ ընծայէի իսկ՝ նորէն պատճառ մը չունէի վրդովուելու չափազանց, ինչու որ կարաւանը պատերազմական վիճակի մէջ և պատնէշներով պաշտպանուած էր : Բացայայտ կը տեսնայի որ այդ պատուիրակութիւնը խրկուած էր մեզի, մենէ կարելի եղածին չափ խոշոր պատառ մը փրցնելու նըպատակով և առանց կռիւի որուն ելքին վրայ մեծ հաւատք չունէին կ'երեւայ այդ Հնդիկները : Նոյն վայրկեանին իսկ պիտի վռնաէի դանոնք, եթէ փափաքած չըլլայի անգամ մը Լիլիէնին ցուցնել : Եւ իրաւ ալ, երբ անոնք անշարժ, աչքերնին սեւեռուն սպառնալից երեւոյթով, ատեան կը կազմէին կրակին շուրջը, Լիլիէն, իր վակօն կտաւ վարքագոյններուն ետին պահուրտած, հետաքրքրութիւնով ու քիչ մըն ալ անձկութիւնով, կը դիտէր անոնց գանկի մորթերով զարդաւուն զգեստները, փետրազարդ կոթով տապալները, (tomahawk) և պատերազմական դոյներով, — կարմիր ու սև, — ներկուած դէմքերը : Եւ սակայն, հակառակ բոլոր ցոյցմունիկ ու ծիծաղելի այդ փառաւորութեան, խիստ կերպով մը մերժեցի իրենց պահանջ :

ջուհիները և պաշտպանողականէն յարձակողականի սկսելով, բացայայտօրէն յայտարարեցի իրենց որ եթէ նոյն իսկ միակ ջորի մը պակսէր կարաւանէն, ես ինքս պիտի իյնայի իրենց ցեղին ետեւէն և պիտի կոտորէի զայն մինչև որ վիճանար:

Հնդիկները մեկնեցան, հազիւ կարողանալով զսպել իրենց կատաղութիւնը և բանակետէն դուրս ելան չեւան՝ սկսան իրենց տապաւնները խաղցնել, ի նշան մարտահրաւէրի: Բայց իմ խօսքերս տպաւորութիւն ըրած էին անոնց վրայ և այդ տպաւորութիւնը ա՛լ աւելի սաստկացաւ երբոր մարդիկներէն երկուհարիւրը, մինչև ակռայնին զինուած, պատերազմի սոսկալի աղաղակներ հանելով սպառնական ցոյց մը ըրին: Կարմրամորթները անմիջապէս հանդարտեցան կարծես և անյայտ եղան:

Բայց հազիւ երկու ժամ անցեր էր և ահա Հէնրի Սէմփսըն, որ ինքնաբերաբար պատուիրակութեան ետեւէն գացած և զանոնք լրտեսած էր, շնչասպառ վերադարձաւ, պօռալով որ Հնդիկներու ահաղին խումբ մը բանակած տեղերնուս կը մօտենար, պատերազմական կարգով:

Ապահով էի որ այդ անաջխաղացումը ցոյց մըն էր լոկ, և Հնդիկները, Ամերիկեան ընկուզենիէ աղեղներով զինուած, անկարող էին, Քէնթըքիի հեռահարուած հրացաններով զինուած մարդերուս վրայ յարձակելու: Ատիկա ատանկ ըլլալը կ'ըսէի Լիլիէնի, ասպահովցնելու համար զայն, որովհետև տերեւի մը պէս կը դողդղար. բայց դաղթականները բոլոր համոզուած էին որ կռիւ մը անխուսափելի էր: Երիտասարդները մանաւանդ որոնք արկածներու հետամուտ էին, խանդավառութիւնով կը սպասէին անոր:

Գրեթէ անմիջապէս ետքը կարմրամորթներուն պատերազմական մենջիւնը լսեցինք, բայց անոնք կանգ առած էին մեր դնդակներուն հասողութենէն քիչ հեռու, կարծես նպաստաւոր ժամու մը սպասելով:

Մեր բանակետին մէջ, մինչև առտու, բամպակենիներու և ուռենիի ռստերու անհուն խարոյկներ վառեցինք. մարդիկ վա-

կոններու շուրջը կրկնապատիկ հսկողութիւն մը ի դորձ դրին: Կնիկները վախով համալուած, սաղմոսերգութիւններ կ'ընէին. ջորիները՝ զօրս բանակետին կեդրոնը հաւաքած էինք՝ անվերջ կը վրնջէին ու իրար կը խածատէին. շուները կ'ոռնային՝ իրենց հոտառութիւնովը Հնդիկներուն մօտաւորութիւնը զգալով: Վերջապէս, սպառնագին ժխոր մը կը թնդար ամէն կողմ: Այն վայրկեաններուն ուր մէկէնիմէկ կարճ լուրթիւն մը կը տրեւր, կը լսէինք հնդիկ հետազօտիչներուն անդուաղմուկը՝ որոնք սուր կռիւներով իրարու ձայն կուտային:

Կէս-դիշերուան մօտ, մեր հակառակորդները փորձեցին մարդագետինը բռնկցնել, բայց խոտը, դարնանային հիւթով առլի, չարեցաւ, հակառակ անոր որ այդ շրջագառաներուն մէջ, երկար ատենէ ի վեր կաթիլ մը անձրև եկած չէր:

Իջեւանին շուրջը դարձաւ ըրած ատեն, այն պահուն իսկ երբ լոյսը ճղքուիլ կը սկսէր, բարերազդութիւնը ունեցայ Լիլիէնը տեսնալու: Յոգնութիւնը վերջապէս յաղթած էր իրեն, կը քնանար ան, գլուխը դրած Մօրքուր էթքինսի ծունկին վրայ, որ որսորդի խոշոր դանակով մը զինուած, երդուած էր ընաջինջ ընել թշնամիները, եթէ անոնցմէ մէկը համարձակէր մօտենալ պղծտիկին՝ զոր հիմա իր զաւկին պէս կը սիրէր: Եւ ես, կը դիտէի այդ քաղցր դէմքը, ոչ միայն սիրահարի, այլ նաև հօր ու պաշտպանի աչքերով և ինքզինքս կարող կըզգայի ձեռքերովս իսկ քղիկ քղիկ ընելու, այդ պաշտելի էակին սպառնացող որ և է մէկը: Ան իմ հրճուանքս էր, իմ հեշտանքս էր և առանց անոր ինծի համար չիկար ուրիշ բան, բայց եթէ անվերջանալի թափառայածութիւններ, աշխարհի վրայ աննպատակ ու դիպուածաւար դժացքներ ու սեւ անբաղդութիւն:

(Շարունակելի)

Արժանատի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԹԲԵԻՆԵԼԻ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻՆՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժադրով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԻՆՆ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- 282,000,000 »
գլուխ եւ յնասուց հատուցում 54,000,000 »

1902 տարւոյ մէջ զանձուած ապահովագրին եւ տուկոս

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմըիւք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿԱՆ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն տան ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պղտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տոքթ. Զէյնալըս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Դիտակաւ ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու անհրաժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նորակառոյց նպատակայարմար չէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակեաւելի նպաստաւոր են աշակերտներու հան-

գրատութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր ու դոյն ու գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբերեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ Պայպըլ-Հաուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Ձաճմաճերար Իււ 64

ԸՆԹԱՑԻ-ԸՆԹԵՐՑ.— ԴՊՐՈՑԻ ԳԻՐԲԸ, Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին, ճոխ պատկերներով ու բազմազան նիւթերով՝ հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դահ.: Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ մը ձրի կը ստանան, 50 փարայ բօսթի ծախք ղրկելով: Ուղղակի Դրատան դիմողներուն կ'արեւոր զեղչ մը տրուի:

Վ. Յ. Յակոբեան Անգլ-Հայ Բառգիրքը որ սպառուել վրայ է, միմիայն յիշեալ գրասուցը կը գտնուի, ուր դիմելու են պէտք ունեցողները:—գին 80 դր:

Ամեն վճարում կանխիկ է: 3—10



Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լաթանկով	3 դր.	{ 25 օրինակիւն աւելի զնոդ- ներուն զոնացուցիչ զեղչ
Ընտիր լաթանկով	5 »	
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ	8 »	

« Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրականացներու եւ քրդականացներու հոյ. Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

1904

34 X 15 սանթիմէր. մեծութեամբ
ՍԵՂԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ. Թուրքերէն,
Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն
լեզուներով

Յուշատետրին սկիզբը աւելցուած են
կարդ մը կարեւոր տեղեկութիւններ սյր
անհրաժեշտ են ամէն գործի մարդոց :

Ընտիր եւ զեղեցիկ լաթանկով

Գին 3 դր.

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց բո-
լոր Գրականացներու եւ Թղթականաց-
ներու հոյ :

Հրատարակիչ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20 Զաւմամբերար, Կ. Պոլիս

Ամենանոյս մքեր, դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
ըջանի առթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած
անհրաժեշտ դիւրութիւններ՝ գրեանական ամէն
յաճախարարութիւն գոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իր գրավա-
ճառական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասը տարիներու մէջ, դըպ-
րոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ :

Զերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները, փո-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատառն բնաւայտ առաւե-
լութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն :


ՕՍՏԱՆԵԱՆ ՀԱՔԱՐԱՎԱՌԹ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոն ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները։ Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու. առ թիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղայաթիա, Թօփըլար Ճատտէսի, Թ. 101։

16--30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Co.

Ճեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԵՂԱՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ

ԲԵՐԱՅԻ

1. Մեծ փողոց, Պօն Մառշի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ։

ԿԱՆԱԹԱՍ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին դէմ։

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, Թ. 13։

ՍԱՐԴՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Չարչը Պօյու, Թ. 120։

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

կասաբայ երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՔՓԷՆԻՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԻՍՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԴՍ ԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ըճկ. ընդդէմ հրդեհի (Ի ԳԱՐԹԱՃԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Մոլային ապահովագր. Ըճկ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բուքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ՆՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան գեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳԱՂԻԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԷՅԻ

Գլխ. երկու հատորին միասին գահկ. 120

Վանառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Դաւաթիա Սեզրոս խան թիւ 5

10—10

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւն-
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հսկէ: Նախորդ
տարուընէ սկսեալ բացուած է նաեւ փոքր
տղջոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

11—12

Կ. Յ. ՏԵԽԵՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՐ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից,
սպագրական գործերու պատրաստութեան
հոգը.

ԳԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5%օր գեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն
մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԽԵՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՐ

ԼԵԻՈՆ Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վկայեալ Բարիզու բժշկական վարժարանէն

Նախկին chef de clinique Ֆրանսայի

Ատամնաբուժական Վարժարանին: Կ'ընդունի

ամէն օր իր բնակարանը՝ Բերա, Մեծ-փողոց

Թ. 407 (Եանիի գարեջրատան դէմ):

10—10